ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն ՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

Թեմա՝ « Ածականի ուսուցումը տարրական դասարաններում»

Կատարող՝ Առաքելյան Անուշ Հրաչիկի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար ՝ Գյուլամիրյան Ջուլիետա, մ.գ.դ. , պրոֆեսոր
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

1. *Ներածություն ---------- 3*
2. *ԳԼՈՒԽ 1 . Ածականը որպես խոսքի մաս, նրա տեղը մայրենի լեզվի տարրական դասընթացում========== 5*
3. *ԳԼՈՒԽ 2. Ածականի համակարգը տարրական դասընթացում---------- 8*
4. ԳԼՈՒԽ 3. Ածականի ուսուցման ձևերն ու մեթոդները----------10
5. *ԳԼՈՒԽ 4. Ածականի ուսուցման դասերի օրինակներ ----------14*
6. *Եզրակցություն----------16*
7. *Օգտագործված գրականության ցանկը----------17*

Ներածություն

Տարրական դասարաններում խոսքի մասերի ուսուցման ժամանակ աշակերտները ի տարբերություն գոյականի և բայի ածականը դժվար են տարբերակում: Հետազոտության ընթացքում բացահայտել եմ աշակերտների դժվարությունները , մշակվել են դասերի ժամանակ ածականի ուսուցման վարժություններ , հետաքրքիր առաջադրանքներ , խաղեր ածականի ուսուցումը առավել հեշտ և մատչելի դարձնելու համար:

Ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցումը կատարվում է III դասարանում, դրա համար հիմք են ընդունվում առաջին դասարանում <<առարկա>>, << գործողություն>> և <<հատկանիշ>> ցույց տվող բառերի մասին տրված քերականական նախագիտելիքները:Սակայն այդ հասկացությունները խորացվում, ընդարձակվում , քերականական անվանումներ ու ձևակերպումներ են ստանում, բնութագրվում են քերականական նոր հատկանիշներով կամ թվի, դեմքի, ժամանակի, հոլովման ու խոնարհման կարգերով, որոնք ուսուցման նախորդ փուլում չէին կարող օգտագործվել:

<<Այս կամ այն խոսքի մասի վերաբերյալ տրված հասկացության յուրացման համար պահանջվում է.

ա) տվյալ կարգին պատկանող բառերի ընդհանուր նշանակության գիտակցում՝ կապված դրանց ձևական հատկանիշների հետ,

բ) տվյալ խոսքի մասի քերականական հատկանիշների համակարգի վրա հենվելու կարողություն>>:

Այստեղ ուսումնասիրվում են գոյականը, բայը, ածականը, թվականը, դերանունը, շաղկապը և ձայնարկությունը՝ իրենց ընդհանուր հատկանիշներով ու խիստ բնորոշ առանձնահատկություններով, որոնք հիմք կտան դրանք ավելի լավ հասկանալու ու ավելի հեշտ ու ճիշտ տարբերակելու միմյանցից:

Հայկական դպրոցների տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրում նախատեսված չէ խոսքի մասերի ամբողջական ուսումնասիրություն:Սակայն կրտսեր դպրոցականները պետք է ձեռք բերեն տարրական գիտելիքներ նաև ձևաբանությունից, որպեսզի բարձր դասարաններում համակարգված քերականության ուսումնասիրման համար անհրաժեշտ հիմք ստեղծվի:

Ի տարբերություն խոսքի մասերի ուսուցման ավանդական հաջորդականության (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ,

շաղկապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն) , որն ընկած է քերականության ուսուցման համակարգված ու գիտական դասընթացների հիմքում՝ լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում նպատակահարմար է դրանք ուսումնասիրել հետևյալ հաջորդականությամբ.

1. *գոյական,*
2. *բայ,*
3. *ածական,*
4. *թվական,*
5. *դերանուն,*
6. *շաղկապ (ընդհանուր ծանոթություն) ,*
7. *ձայնարկություն (ընդհանուր ծանոթություն) :*

Այսպիսի հաջորդականությունն առաջին հերթին հիմնավորվում է այն փաստով, որ երեխաները խոսքում գոյականից հետո ամենից շատ գործածում են բայեր: Բացի այդ , բայը գոյականից հետո ներկայացնելը ուսուցողական մեծ հնարավորություններ է ստեղծում ոչ միայն ձևաբանական նյութի ուսուցումը դյուրընկալ դարձնելու, այլև կապակցված խոսք կառուցելու հմտություններ ձեռք բերելու համար: Սակայն կա ևս մի մոտեցում. Խոսքի մասերի այդպիսի հաջորդականությամբ գործնական ուսուցումը ենթադրում է դրանց ուսումնասիրությունը հիմք ընդունելով քերականական այդ միավորների ընդհանրությունները, նմանություններն ու տարբերությունները: Իսկ դրանք հնարավոր է նկատել և ընկալել միայն իրար հետ համեմատելով: Այդ իսկ պատճառով խոսքի մասերի ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել ոչ թե առանձին – առանձին , այլ փոխկապակցված: Մասնավորապես , համատեղելի է գոյականի, բայի և ածականի ուսումնասիրումը:

Ուսուցման հետագա փուլերում աշակերտներն աստիճանաբար ուսումնասիրում են խոսքի մասերն առանձին- առանձին ՝ իբրև համակարգված քերականություն:

ԳԼՈՒԽ 1 . Ածականը որպես խոսքի մաս, նրա տեղը մայրենի լեզվի տարրական դասընթացում

Մեզ շրջապատող առարկաներից յուրաքանչյուրն ունի իր հատկանիշները: Օրինակ՝ քարը կարող է լինել մեծ, փոքր, կարծր, փափուկ, կարող է լինել մոխրագույն, կարող է լինել մաքուր, կեղտոտ և այլն: Գիրքը կարող է լինել հայերեն, ռուսերեն, վրացերեն և այլն, կարող է լինել մեծ կամ փոքր, հաստ կամ բարակ, հին կամ նոր, թանկ կամ էժանագին և այլն:

Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկաների այս կարգի հատկանիշները, կոչվում են ածական կամ ածական անուն:Ածական բառը ծագում է ածել բառի հին մի իմաստից, որը նշանակում է վրան դնել: Քանի որ այս բառերը դրվում են գոյականի վրա (քաղցր խնձոր, լավ գիրք, կարկաչուն վտակ, անտառային օդ և այլն), այդ պատճառով էլ կոչվում են ածական:

Ածականները կարող են ցույց տալ առարկայի բուն հատկանիշները : Օրինակ՝ քաղցր տանձ, կծու տաքդեղ, սպիտակ կտոր, ծեր մարդ և այլն:

Այսպիսի ածականները կոչվում են որակական ածականներ, որովհետև ցույց են տալիս առարկայի որակական հատկանիշները:

Ածականը կարող է ցույց տալ նաև վերաբերական հատկանիշ: Օրինակ՝ արծաթե գդալ, կավե աման, գյուղական անդորր, ցամաքային զորքեր և այլն: Որոնք կոչվում են հարաբերական ածականներ:

Այսպիսով ածական անուն կամ ածական են կոչվում առարկայի որպիսություն կամ վերաբերություն ցույց տվող բառերը:

Ածականները պատասխանում են ինչպիսի՞, որպիսի՞ , ո՞ր հարցերին:

Երեխան մինչև դպրոց հաճախերն արդեն ունենում է կապակցված, լեզվի օրինաչափություններով ձևավորված խոսք, կարողանում է հասակակիցների և մեծերի հետ հաղորդակցվել իր մայրենի լեզվով: Սակայն ոչ միշտ է , որ երեխայի բառապաշարը հարուստ է , հղկված և զերծ բարբառային ձևերից, ժարգոններից ու օտարալեզու բառերից:

Երեխայի խոսքը շարունակում է ձևավորվել կրտսեր դպրոցական տարիքում: Զտվում է բառապաշարը և հարստանում կենցաղային ու գիտական բառերով: Հետևաբար պետք է խոսքի ճիշտ ձևավորման ուղղությամբ աշխատանքներ իրականացնել և տանը, և դպրոցում: Այդ դիտանկյունից համակարգված աշխատանքները սկսվում են երեխաների ուսումնական գործունեության

նախաքայլերից, քանի որ այս շրջանում են նրանք հյուսում պատմություններ, կազմում նախադասություններ, բառակապակցություններ և այլն:

Խոսքի փոքրիկ հատվածներ կազմելիս կրտսեր դպրոցականները գործածում են ինչպես օտարամուտ բառեր, այնպես էլ քերականորեն ոչ ճիշտ կառուցված նախադասություններ:

Հայտնի է, որ քերականության կարևոր բաժիններից մեկի՝ ձևաբանության գործնական ուսումնասիրումը մպաստում է բառերի քերականական հատկանիշների գիտակցմանը, բառերի թեքման, համաձայնեցման, կապակցման օրենքների ու ձևերի յուրացմանը:

Ձևաբանական գիտելիքները մեծապես կարող են նպաստել նաև կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը: Ի տարբերություն խոսքի մասերի ավայնդական հաջորդականության՝ ներկայումս տարրական դասարաններում գոյականից հետո ուսումնասիրվում է բայը: Այս պարագան պայմանավորվում է լեզվական ու դիդակտիկական մի շարք նկատառումներով: Այդ մոտեցումը հիմնավորվում է 5 - 6 տարեկանների խոսքում գոյականից հետո բայի գործածության բարձր հաճախականության իրողությամբ և նախադասություն կազմելու գործընթացում դրա կարևոր դերով: <<Գոյական անուն >> թեման անցնելիս աշակերտներին պիտի հիշեցնել առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի վերաբերյալ գիտելիքները: Գ գործնական վարժությունների միջոցով երեխաները պետք է հանգեն այն եզրակացության , որ լեզվի ողջ բառամթերքն իր որակական հատկանիշներով բաժանվում է որոշակի խմբերի: Այնուհետև հարկավոր է կրկնել յուրաքանչյուր խմբի առանձնահատկությունները (քանակ, որակ, գործողություն և այլն): Հետագայում այդ գիտելիքները մպաստելու են ածականի և բայի դյուրին յուրացմանը: Ըստ տարրական դասարաններում քերականական գիտելիքների ուսուցման մեթոդիկայի՝ ածականի ուսուցումն սկսում ենք բնագրի վրա կատարվող աշխատանքով:

Գործնական օրինակների հիման վրա երեխաները պետք է գիտակցեն կապակցված խոսքի բովանդակությանը ներկայացվող պահանջների կարևորությունը: Այդ նպատակով հարկավոր է առաջադրել մի քանի փոքրիկ բնագրեր, գտնել դրանց նմանությունները, համեմատել բառամթերքը, որոշել, թե որ բառերն ու արտահայտություններն են տեղին, որոնք կարելի է փոխարինել ավելի դիպուկ ձևերով և այլն: Երեխաների մեջ խոսքի կառուցման առաջնային ու կարևոր որակներից մեկը վերաբերում է խոսքի նպատակայնությանը:

Նպատակային խոսք կառուցելու համար ամենից առաջ պետք է մտահոգվել դրա իմաստակիր միավորների՝ բառերի, ընտրության խնդրով: Հարկավոր է հասնել այն բանին , որ աշակերտները տարբեր բառերից կարողանան ընտրել ամենադիպուկը: Նրանք դա կարող են անել այն դեպքում, երբ հստակորեն զանազանում են տվյալ հասկացության կամ իմաստի արտահայտման տարբեր միավորները, դրանց նրբերանգները: Ակնհայտ է , որ այստեղ խոսքը վերաբերում է հոմանիշներին ու դրանց ընտրությանը: Բառական հոմանիշների ուսուցումը գործնական կարևոր նշանակություն ունի : Աշակերտներին պետք է սովորեցնել հասկանալ հոմանիշների ոչ միայն իմաստային ընդհանրությունները, այլև տարբերությունները:

ԳԼՈՒԽ 2. Ածականի համակարգը տարրական դասընթացում

Նախադպրոցական տարիքում փոքրիկը իր խոսքում գործածում է ածականներ, սակայն նախնական պատկերացումը ձևավորվում է առաջին և երկրորդ դասարաններում. Նա առանձնացնում է ածականները՝ որպես առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր: Պետք է նշել, որ այն առանձին չի ուսուցանվում, այլ առարկա, գործողություն, հատկանիշ միասնության մեջ : Հարցերով կարողանում են տարբերակել, օրինակ՝ ինչ- ծաղիկ, ինչպիսի- վարդագույն, ինչ եղավ- ծաղկեց: Ծաղիկը ցույց է տալիս առարկան, վարդագույնը՝ հատկանիշը, իսկ ծաղկեցը ցույց է տալիս, թե ինչ եղավ ծաղիկը գործողությունը:

Ածականը սովորեցնելու համար պետք է մի հիմնական խնդիր որոշել, թե արդյոք մենք հաշվի ենք առնում նրանց բովանդակությունը, թե նրանց կիրառությունը: Այն բոլոր բառերը, որոնք դրվում են անվան վրա, այսինքն՝ ածվում են անվան վրա, կոչվում են ածականներ: Այդ իսկ պատճառով գոյականը, երբ գործածվում է ածականաբար, դառնում է ածական: Թվականը մտնում է ածականների մեջ, դերբայները համարվում են ածականներ և այսպիսով կիրառությունը մթագնում է բառի արտահայտած բովանդակությունը կամ , ասենք բառ՝ խոսքի շինանյութ լինելու հիմնական որակը:

Եթե որոշում ենք բառի կատեգորիան, չենք առաջնորդվում միմիայն նրա կիրառությամբ, այլ այն ընդհանուր առումով, որով բառը հանդես է գալիս խոսքի մեջ: Առաջնորդվելով դրանով՝ ածականների հիմնական առումն ու իմաստը առարկաների որակը տալն է , ուստի ածականները սովորեցնելը պետք է կապել առարկաների որակի ըմբռման հետ: Այդ պատճառով էլ մենք նախ առարկաների որակը որոշելն ենք սովորեցնում աշակերտներին և ապա ածականները՝ որպես խոսքի մասեր: Այսպես, օրինակ, առաջարկվում է աշակերտներին որոծել շրջապատում եղած առարկաների բոլոր հատկությունները, օրինակ՝ բարևր, կարմիր, բարակ, մեղ, լայն և այլն: Ածականը ուսուցանվում է բնագրից դուրս բերված բառերի միջոցով: Սկզբից դուրս են բերում գոյականները, այնուհետև նրան հատկություն, որպիսություն ցույց տվող բառեր, որոնք պատասխանում են ոչ թե ով, ինչ այլ ինչպիսի, որպիսի հարցերին: Ուսուցիչն այստեղից բխեցնում է ածականի սահմանումը և տալիս նրա ձևակերպումը: Առարկայ ի որպիսություն կամ հատկություն ցույց տվող բառերը կոչվում են ածական անուն կամ ուղղակի՝ ածական :

Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է գրել ածականների հոմանիշներն ու հականիշները, որը նպաստում է նոր ածականներով բառապաշարի

հարստացմանը: Հետո աշակերտներն ասում են այնպիսի ածականներ, որոնք ցույց են տալիս առարկաների ձևը, գույնը, չափը , համը, որակը, նյութը և այլն: Օրինակ՝ կլոր սեղան, կապույտ մանուշակ, փոքր սենյակ, կծու պղպեղ, քաջ զինվոր, երկաթե մուրճ:

Նրանք իրեց ասած գոյականներն ու ածականները գործածում են նախադասությունների մեջ:

Աշակերտներն գործնական վարժությունների միջոցով պետք է հանգեն այն եզրակացության, որ ածականը թիվ, դեմք, հոլով և ժամանակ չունի: Այդ նպատակով ուսուցիչը պետք է ցույց տա, օրինակ, մեկ կարմիր շրջան և գրատախտակին գրի ՝ կարմիր շրջան: Այնուհետև ցուցադրի մի քանի կարմիր շրջաններ և դարձյալ գրի՝ կարմիր շրջաններ: Հենց գրվածի վրա երեծաները համեմատելու միջոցով կեզրակացնեն, որ շրջանների քանակի փոփոխության դեպքում շրջանը դարձավ շրջաններ , բայց կարմիր բառը մնաց նույնը: Նույն ձևով հետագա փուլում պիտի ձևավորվի ածականի չհոլովվելու մասին գիտելիքը:

Տեղեկություն է տրվում նաև պարզ, բարդ և ածանցավոր ածականների մասին: Այն ածանցները , որոնք ավելանալով արմատին կամ բառին կազմում են ածական անուններ, կոչվում են ածականակերտ ածանցներ: Ածականակերտ ածանցները լինում են նախածանցներ և վերջածանցներ: Վարժությունների միջոցով երեխաները որևէ հոդվածից դուրս են բերում ածականները և որոշում դրա կազմությունը:

Ածականի մասին ավելի խոր գիտելիքներ երեխաները ձեռք են բերում ավելի բարձր դասարաններում:

ԳԼՈՒԽ 3. Ածականի ուսուցման ձևերն ու մեթոդները

Դեռևս նախադպրոցական տարիքում փոքրիկն իր խոսքում գործածում է ածականներ, կարողանում է ճիշտ պատասխանել մեծերի առարկայի հատկանիշին վերաբերող հարցերին (Մատիտն ինչ գույնի է (կարմիր) , Որ խնձորն ես ուզում (մեծը) և այլն): Ուսուցման առաջին փուլում երեխաները նախնական պատկերացում են կազմում ածականների իբրև առարկայի հատկանիշ ցույց բառերի մասին , սովորում են հարցերի միջոցով դիտարկել առարկայի հատկանիշ բնցույց տվող բառերի իմաստբային արժեքը, նախնական պատկերացում է ձևավորվում ածական անուն հասկացության մասին, երեխաների բառապաշարը հարստացնում է ածականներով, մշակվում է ածականները խոսքում ճիշտ գործածելու (գրավոր և բանավոր) ունակություն:

Ուսուցման տարրական փուլում կարևոր է հարցերի միջոցով ախականները որոշելու կարողության ձևավորումը: Ածականի իմաստային նշանակության էությունը ընկալելի դարձնելու նպատակով երեխաները կատարում են վարժություններ , որոնք նպաստում են այն համոզմունքի ձևավորմանը , որ հատկանիշն առարկայից անբաժան է , և նախադասության մեջ հատկանիշ ցույց տվող բառը հանդես է գալիս գոյական անվան հետ: Այս վարժությունների միջոցով երեխաները համոզվում են , որ բառերը կարող են առարկաների հատկանիշները ներկայացնել ըստ գույնի , համի, ձևի, մեծության, նյութի և այլն: Տարբեր դիդակտիկ նյութերի, առարկաների միջոցով երեխաները համոզվում են , որ հատկանիշ ցույց տվող կարմիր բառն օգտագործվում է հագուստի, դրոշի, դույլի, գլխարկիօ, իսկ թթուն՝ կիտրոնի, լոլիկի, սալորի, նարնջի, մեծը՝ գնդակի, գրքի, քարի, ծաղկամանի, սառը՝ ջրի, սառույցի, պաղպաղակի հետ և այլն: Այս համոզման գալը շատ կարևոր է ածական անվան՝ հետագայում տրվելիք սահմանումը գիտակցորեն ձևակերպելու համար.

- Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը կոչվում են ածական անուն կամ ածական:
- Առարկաները պատասխանում են ինչպիսի՞ հարցին:

Այս սահմանումը կամ կանոնը հաստատելու համար աշակերտների բերած օրինակները կարելի է գրել տալ գրատախտակին և պարզել, թե ինչ հարց կարելի է տալ դրանց: Որպես օրինակ, ասենք՝ կարմիր, լայն, նեղ, փայտյա, աշակերտական , խելոք, առողջ, մեջ, գեղեցիկ ածականների առաջադրած ձևաբանական հարցերով կարելի է պարզել, որ ախականներին կարելի է առաջադրել ինչպիսի, որպիսի և որ հարցերը:

Ապա երեխաներին պետք է առաջադրել մի խումբ ածականներ , որպեսզի դրանք կապեն համապատասխան գոյականների հետ, և մի խումբ էլ գոյականներ, որոնց համար գտնեն համապատասխան ածականներ: Դրանով աշակերտները սովորում են առարկայի մեջ տեսնել նրա հատկանիշները, հատկանիշը վերագրել առարկային և դրանցից կայուն բառակապակցություններ ստեղծել, որոնք նախադասության ու խոսքի հիմքն են , ինչպես նաև կարևոր նշանակություն ունեն երեխաների տրամաբանական մտածողության և աշխարհաճանաչողության զարգացման համար:

Որպոսզի երեխաները գիտակցեն , թե մեր խոսքում ածականներն ինչ դեր ունեն, կարելի է նրանց առաջարկել համեմատել ածականներ ունեցող և առանց դրանց բնագրերը: Տարաբնույթ հարցերի միջոցով աշակերտները կհանգեն այն եզրակացության, որ առանց ածականների խոսքըոչ միայն խունանում է , կորցնում իր գեղեցկությունն ու հմայքը, այլև առարկաների, երևույթների ն մասին մեր ստացած տպավորությունները ճշգրիտ և ամբողջական չեն լինում:

Ուսուցման հետագա փուլում դարձյալ վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները պետք է սովորեն նախադասության մեջ հարցադրման միջոցով ոչ միայն որոշել առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը, այլև լրացնել բաց թողնված ածականները նախ համապատասխան հարցի օգնությամբ, ապա՝ առանց հարցի:

Աշակերտները գործնական վարժությունների կատարման միջոցով պետք է հանգեն եզրակացության, որ ածականը թիվ, դեմք, հոլով և ժամանակ չունի:

Այդ նպատակով ուսուցիչը պետք է ցույց տա, օրինակ՝ մեկ կարմիր խնձոր և գրատախտակին գրի՝ կարմիր խնձոր: Այնուհետև ցուցադրի մի քանի կարմիր խնձոր և դարձյալ գրի՝ կարմիր խնձորներ: Այնուհետև հենց գրվածի վրա համեմատելու միջոցով կեզրակացնեն, որ խնձորը դարձավ խնձորներ, բայց կարմիր բառը մնաց նույնը: Նույն ձևով հետագա փուլում պիտի ձևավորվի ածականի չհոլովվելու մասին գիտելիքը:Այդ նպատակով կարելի է դարձյալ վերցնել ածական+ գոյական կաղապարով բառակապակցությունը և հոլովել.

Ուղղական - քաղցր նարինջ

Սեռական - քաղցր նարնջի

Տրական - քաղցր նարնջին

Հայցական - քաղցր նարինջ

Բացառական - քաղցր նարնջից

Գործիական - քաղցր նարնջով

Ներգոյական - հոլովաձև չունի

Այս աշխատանքից հետո երեխաները կարող են ձևակերպել ածականի ամբողջական նոր սահմանումը.

Այն բառերը, որոնք պատասխանում են ինչպիսի, որ հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշ, չեն հոլովվում ու չեն խոնարհվում, կոչվում են ածական անուն կամ ածական:

Այս բնորոշումը երեխաները ոչ միայն պետք է սովորեն, այլև կարողանան բացատրել, իսկ ավելի հաճախ ածականի տարբերակման հիմքում դնեն նրա քերականական հատկանիշների հաշվառումը, իրենց մտավոր գործողությունները հիմնավորեն այս բնորոշման տվյալներով: Այսպես ՝ երեխաները բացատրում են , որ իրենց ընտրած բառերը ածական են , որովհետև պատասխանում են ինչպիսի, որ , որպիսի հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշը, չունեն թիվ, դեմք, հոլով և ժամանակ, չեն հոլովվում և չեն խոնարհվում և այլն: Հաճախ այսպիսի բացատրություններն ու մեկնաբանությունները շատ ավելին են տալիս երեխաներին, քան կանոնը կամ սահմանումն անգիր անելը:

Այս խոսքի մասը լավ ճանաչել;ու և գործադրման գործնական կարողություններ մշակելու համար ուշադրություն պետք է դարձնել նաև շարահյուսական կիրառությանը: Մի շարք նախադասությունների շարահյուսական ու ձևաբանական վերլուծության միջոցով կարելի է ցույց տալ, որ ածականը խոսքի մեջ շատ մեջ գործածություն ունի և կարող է հանդես գալ որպես ենթակայի լրացում (Գերազանցիկ աշակերտը պարգևատրվեց:), լրացման լրացում (Աշակերտը կարմիր վարդը նվիրեց իր ուսուցչուհուն:) և ստորոգյալի մաս (Մեր պարտեզի վարդերը կարմիր են): Այստեղից կարելի է եզրակացնել՝ <<Ածականը նախադասության մեջ կատարում է լրացման, իսկ օժանդակ բայերի հետ ՝ նաև ստորոգյալի պաշտոն>> :

Ածական անվան մասին տրված հասկացությունն ամրակայելու , ինչպես նաև երեխաների մեջ ուսուցված գիտելիքները գործնական կիրառելու կարողություն մշակելու նպատակով պետք է անցկացնել տարբեր տիպի մարզողական , վերլուծական ու կիրառական վարժություններ՝ հիմք ունենալով ոչ միայն ածականը , այլև գոյականն ու բայը, դրանց կապակցության , համաձայնության ու բառային փոխհարաբերության մյուս ձևերը:

Ինչպես գոյականի և բայի, այնպես էլ ածականի մասին երեխաների ունեցած գիտելիքները ամրակայելու համար դարձյալ պետք է վարժություններ

Գոյական	Ածական	Բայ
Մազ	Մազոտ	Մազոտել
Ջուր	Ջրիկ	Ջրել
թև	թևավոր	թևավորել
Սոսինձ	Սոսնձոտ	Սոսնձել

կատարել գոյականի, բայի և ածականի կապակցության, համաձայնության և բառային փոխհարաբերության մյուս փևերի շուրջ: Այդ նպատակով պետք է հանձնարարել տրված բառախմբից հարցերի միջոցով ածականները որոշելու, այդ ածականներին համապատասխան գոյականներ ընտրելու և բառակապակցություններ կազմելու առաջադրանքներ: Ածանցների օգնությամբ մի խոսքի մասից այլ խոսքի մաս ստանալու առաջադրանք ունեցող վարժությունների միջոցով ամրակայվում և խորացվում են ոչ միայն ածականի, այլև գոյականի և բայի մասին երեխաների ունեցած գիտելիքներն ու խոսքում դրանց ճիշտ գործածման ունակությունները:

Այս վարժությունների կատարման առաջին փուլում էապես շահեկան է նմուշօրինակի ցուցադրումը այսպիսի աղյուսակի տեսքով.

Ածականի անվան ուսուցումը կարևոր է մասնավորապես բառապաշարի հարստացման , խոսքի զարգացման իմաստով: Այս ուղղությամբ աշխատանք պիտի կատարել մասնավորապես մայրենիի դասագրքերի տարաբնույթ նյութերի շուրջ տարվող ուսումնասիրությունների ժամանակ, երբ երեխաները վերլուծում են ընթերցած ստեղծագործությունը, դիտարկում հերոսների արարքները:

Աշակերտների բառապաշարը ածականներով հարստացնելուն նպաստում են ինչպես բանավոր , այնպես էլ գրավոր ստեղծագործական շարադրությունները, մանավանդ երբ դրանք հաջորդում են էքսկուրսիաներին, բնության մեջ կատարվող տարաբնույթ դիտումներին, նկարների և առարկաների դիտումներին, որոնք առավելագույնս նպաստում են , որ աշակերտները տեսնեն և առանձնացնեն առարկաների էական հատկանիշները, ընտրեն այդ հատկանիշները ներկայացնող դիպուկ բառեր և գործածեն խոսքում:

ԳԼՈՒԽ 4. Ածականի ուսուցման դասերի օրինակներ

Ձևաբանական և շարահյուսական նյութերի, մասնավորապես՝ կապակցված խոսքի ճիշտ կառուցման հնարների ուսուցման տեսանկյունից հարկավոր է մշտապես հիմք ընդունել քերականական այդ իրողությունների ընդհանրությունները, նմանություններն ու տարբերությունները: Դրանց հիմնավոր ընկալումը հնարավոր է բացառապես միմյանց հետ համադրելու պայմաններում: Այդ իսկ նկատառմամբ էլ հոգեբանական նորագույն գիտափորձերի հիման վրա հանձնարարելի է գոյականի, ածականի և բայի միաժամանակյա ուսուցումը:

Մանկավարժական աշխատանքի ընթացքում առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի միաժամանակյա ուսուցումն իրականացնելիս հանգեցինք այն համոզման, որ նման մոտեցումն օգտակար է և հուսալիորեն արդյունավետ:

Աշակերտներին բաժանեցինք մրգեր: Նպատակն այն էր, որ անվանվեին դրանք: Բնականաբար, աշակերտները ճանաչեցին դրանք ու եռաբաժան գրատախտակի առաջին հատվածում գրեցին մրգերի անունները: Աշակերտների ուշադրությունը բևեռվեց այն հանգամանքի վրա, որ իրենց ձեռքի առարկաները բառերի տեսքով << հայտնվեցին >> գրատախտակին: Բացահայտվեց տվյալ առարկայի և այն ցույց տվող բառի հարաբերությունը: Տարբերակվեց , թե ինչ հարցի միջոցով է նրանց ձեռքի միրգը ճանաչվելու: Աշակերտները ասացին << ինչ>> հարցը: Այնուհետև յուրաքանչյուր մրգի անվան դիմաց գրեցինք ինչ : Խոսքի մեջ միտումնավոր գործածում էինք առարկա բառը : Դրանով ձգտում էինք նրանց մտածողության մեջ ձևավորել << առարկա >> հասկացությունը: Այնուհետև առաջարկեցի նկարագրել մրգերը՝ ինչպիսին են դրանք: Աշակերտները զննեցին մրգերը: Նրանք որակումներ էին տալիս՝ դեղին է , կանաչ է , փափուկ է, կլորավուն է , կարմիր է, պինդ է և այլն:

Յուրաքանչյուրն իր ձեռքի միրգը բնութագրող բառերը գրեց գրատախտակի երկրորդ հատվածում: Մեր առաջարկով նրանք նաև համտեսեցին մրգերը և բնութագրեցին՝ քաղցր է, թթու է , համեղ է, հյութալի է, կորիզավոր է և այլն: Այդ բառերը նույնպես գրվեցին գրատախտակին: Աշակերտներն ընկալեցին այն հատկանիշները, որոնցով օժտված էին մրգերը; Դրանք նույնպես բառերի տեսքով շարվեցին գրատախտակին:

Ճշտվեց , որ այդ հատկանիշների անվանումները պատասխանում են ինչպիսի՞ հարցին:Ընդհանրացվեց, որ միրգ առարկայի հատկանիշները ևս բառերի տեսք ընդունեցին: Դրանք հատկանիշ ցույց տվող բառերն են : Հարց ուղղվեց աշակերտներին, թե իրենք ինչ արեցին միրգը: Նրանց արտասանած

կերա, ծամեցի, կիսեցի, գցեցի բառերչն էլ գրվեցին գրատախտակի երրորդ հատվածում: Դրանց դիմաց գրվեց ինչ արեցի հարցը: Երեխաները համոզվեցին, որ իրենց կատարած՝ ուտելու, ծամելու, կիսելու և այլ գործողություններն արտահայտվել և գրվել են բառերով: Հետևաբար, դրանք գործողություն ցույց տվող բառեր են:

Հաջորդեցին այլ առարկաների զննումների, դրանց համեմատության, դրանցով կատարվող գործողությունների բացահայտման , հարցերի միջոցով առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի տարբերակման, խոսքի մեջ դրանք որոշելու, ապա և նախադասությունների մեջ օգտագործելու և այլ աշխատանքներ:

Հաջորդ դասին կազմակերպվում է խաղ: Գրատախտակին ամրացվում է արևածաղիկ: Մեջտեղի շրջանին ամրացվում է որևէ առարկայի անուն: Երեխաներին բաժանվում է թերթիկներ, նրանք բնութագրում են տվյալ առարկան և ամրացնում արևածաղիկի թերթիկներին: Նպատակ ունի երեխաների բառապաշարի հարստացմանը առարկայի հատկանիշ ցույց տվող բառերով՝ ածականներով:

Մյուս դասի համար պատրաստում ենք երեք՝ կարմիր, կանաչ, կապույտ, գույնի տուփեր: Աշակերտներին բաժանում ենք կարմիր, կանաչ, կապույտ գույնի ուղղանկյուններ, նրանց հետ պայմանավորվեցինք, որ կարմիր ուղղանկյունների վրա առարկա, կապույտներին՝ հատկանիշ, իսկ կանաչներին՝ գործողություն ցույց տվող բառեր գրեն և գցեն համապատասխան գույնի տուփի մեջ:

Այսպիսով, երեխաները միանգամից ծանոթանում են առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերին: Համեմատությունների և հակադրությունների միջոցով միաժամանակյա նման ուսուցումն աշակերտներին ակնառու ձևով զգալ է տալիս խոսքի մասերի տարբերությունները: Այդ կերպ դյուրին է դառնում դրանց մտապահումը: Հատկապես ընդգծելի է այն պարագան, որ գրատախտակի վրա սխեմայի տեսքով կատարվող աշխատանքի դեպքում երեխաները կարողանում են ամբողջության մեջ տեսնել և ըմբռնել լեզվական այդ իրողությունները

Սա մի մոտեցում է , որ կրտսեր դպրոցականների համար և մատչելի է , և արդյունավետ: Խնդիրն այն է, որ նշված խոսքի մասերն աշակերտներին հաղորդվում են միասնաբար և փոխշաղկապված: Տարանջատումն այդ դեպքում նրանց համար դառնում է անընկալելի:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքը ցույց տվեց , որ ածական անունը ուսուցանվում է գոյականի և բայի հետ միասին: Այսինքն, առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի միասնության մեջ:

Ածական անվան ուսուցումը կարևոր է մասնավորապես բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման համար:

Ածականի ուսուցումը առանց դիդակտիկ նյութերի, խաղերի , հնարավոր չէ, որովհետև մանկավարժական փորձով ապացուցված է , որ երեխաները հիմնականում սեփական կենսափորձից բխող եզրակացությունների հիման վրա են գիտակցաբար և հեշտությամբ յուրացնում մատուցվող դասանյութը:

Օգտագործված գրականության ցանկը

1. Ջուլիտա Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա Երևան , 2006,
2. Ա. Ղարիբյան և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա Երևան , 1959,
3. Ա. Տեր- Գրիգորյան, Քերականական տարրական գիտելիքների ուսուցումը երրորդ դասարանում Երևան, 1971,
4. Ա. Տեր- Գրիգորյան, Քերականության մեթոդիկա Երևան, 1977,
5. Ա. Տեր- Գրիգորյան, Քերականության դասը տարրական դասարաններում Երևան, 1971